

ՀԱԾԱՌՈՑ ԳԻՏԱԿԱՆ. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Թ. Սվզյարեկյան

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ ՅԱՎՈՏ ՎԵԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(*Vicia villosa* Roth)

Բուսաբույծների առաջ դրված այն մեծ խնդիրը, որ անհրաժեշտ է մեծացնել կերային պիտակուցների քանակն ավելացնելով խոտացանու-
թյան տարածությունները՝ բնորոշելով արտադրողականությունը բարձր, պիտակուցներով հարուստ ու ցրտադիմացկուն բույսեր, հաճախ արդեական-
վում է խոտաբույսերի սերմերի պակասի կամ բացակայությունից պատ-
ճառով:

Հայաստանի հարուստ և բազմադան վայրի բուսականությունն անը-
պաս նյութ է սալիս բնորոշելու առանձին արժեքավոր տեսակներ, որոնք
ունեն տնտեսական առավելություններ: Այդ տեսակների կերային առանձ-
նահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտա մշա-
կության մեջ մտցնել մի շարք վայրի տեսակներ:

Այդ տեսակներից ուսումնասիրման հետաքրքրման օբեկտ է տեղական
թավոտ վիկը (*Vicia villosa* Roth): Գրականությունից հայտնի է [1], որ նա
ունի մի շարք տնտեսական առավելություններ՝ վաղահաս է, ցրտադիմաց-
կուն և պահանջկոտ է արտաքին պայմանների հանդեպ: Նրա ծիլերը դի-
մանում են օդի ցածր ջերմաստիճաններին և չեն ցրտահարվում: Մ. Գ.
Թումանյանը [2] նշում է նաև այդ վիկի կերային բարձր արժանիքները:

Հայկական ՍՍՌ բույսերի Գենետիկայի և Արևելյանայի Ինստիտուտի
էքսպերիմենտալ բոտանիկ 1949 թ. մենք փորձարկեցինք Հայաստանում
տարածված մի շարք վայրի տեսակներ, որոնց թվում նաև տեղական թա-
վոտ վիկը: Հայաստանի երեք շրջաններից (Աղիզբեկով, Շամազդին, Կար-
միր) հավաքված նրա սերմերը ցանեցինք զարու հետ խոտը: Համեմա-
տություն համար թավոտ վիկի կողքին ցանվեց նաև Կուրախական վիկի
«Լեզովսկայա» սերիցիոն սորտը (*v. sativa*): Նախնական ցանքը կատարվեց
արկղիների մեջ մարտ ամսին: Ծիլերը երևացին համառությամբ և չուռվեցին
օդի ցածր ջերմաստիճաններից (—7° մինչև —3° և ավելի ցածր): Դառար
ձյունից ազատվելուն պես կատարեցինք դաշտային ցանքս՝ եղանակների
անբարենպաստ լինելու պատճառով ապրիլի 19-ին, մարդերի մեջ, յուրա-
քանչյուր մարդը 5—10 քառ. մետր տարածությամբ, շարքաների, ջրաբ-
րի հողերում, 20 սմ. միջշարքային հեռավորությամբ: Ցանքի ընդհանուր
տարածությունը 200 քառ. մետր, ծիլերը դաշտում երևացին համառությամբ
և միտոմոտու: Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունի վայրի տե-
սակները մշակության մեջ մտցնելու տնտեսական [3]: Ծիլույց հետո վիկն
սկսեց արագ զարգանալ, հասնելով մինչև 50 սմ բարձրության: Բերքի
քանակը պարզելու համար վերցրել ենք նմուշներ քառակուսի մետրերով:

Քաղաքի վրին քառ սերմերի	Կանաչ մասնա ի քառ մետրից (զբաժնեքով)
Աղիգրեկովի շրջանից	750
Կարմիրի	1245
Շամշադինի	1085
«Լեզովկայա»	665

Այս թվերը հեկտարների վերածելով մենք կստանանք վրկ-դարու կանաչ մասնայի մոտ 10—12 տոննա բերք։ Էզովկայան մեր պայմաններում կտա մ—6,5 տոննա կանաչ մասնա։

Այսպիսի բերքաավարյունը կարելի է բարձր համարել՝ հաշվի առնելով նաև այն չողային պայմանները, որոնցում կատարվել է փորձը։ Չողի անթափանցիկությունը պատճառով փորն անհրաժեշտ է ֆեկկո շերտալիս։

Ֆենոլսդիական դիտողություններից երևաց, որ թավառ վրկի վեղետացիան յափական կարճ է առում։ Նա ծաղկել սկսեց ծլումից 35 օր հետո, իսկ «Էզովկայա»-ն՝ 60 օր հետո։ Այս հատկանիշն ունի տնտեսական մեծ նշանակություն։ Այն ժամանակ, երբ դաշտն զբաղված չէ որևէ այլ կուլտուրայով, մենք կարճ ժամանակում կարող ենք ստանալ վաղ դարձանային կանաչ կերու՝ Էզեկտացիայի կարճ առևելք նպաստում է նաև այն բանին, որ վրկի բերքահավաքից հետո դաշտն արագ աղատվում է և կարելի է մշակել որևէ այլ կուլտուրայի համար։

Թավառ վրկի կերային հատկանիշները պարզելու համար նրա կոկոնակայան շրջանում կատարեցինք քիմիական անալիզներ։

Ստորև բերում ենք անալիզների արդյունքները՝

Ո՞ր շրջանից է եղել վրկի սերմը	Քիմիական կազմը տոկոսներով (սպային չափային վիճակում)				
	Չոր նյութում	Սպիտակուց- նյութեր	Շաք- ուգու	Բարձրժա- նյութ	Մոխիր
Աղիգրեկովի . . .	92,55	23,92	4,19	15,91	3,37
Կարմիրի	92,15	20,60	3,12	20,51	9,50
Շամշադինի . . .	92,48	19,45	3,41	13,94	9,42
«Լեզովկայա» . . .	90,08	13,57	2,28	20,60	10,29

Աղյուսակից երևում է, որ մեր վրկերի քիմիական կազմում չոր նյութերի և սպիտակուցների տոկոսը բարձր է։ Էզովկայան վրկը պարունակում է 13,57% սպիտակուց, մինչդեռ Աղիգրեկովի շրջանի վրկը՝ 23,09%³։ Բարձր է նաև թավառ վրկի բնդհանուր աղտոտի տոկոսը, հասնելով 4,19-ի։

³ Անալիզները կատարել են Գ. Դեմաբյանը և Կ. Բարսեղյանը Հայկական ՍՍՌ-ի Ագրոգիկայի Ռոյսերի Դեպարտմենտի և Սելեկցիայի Ինստիտուտի Բոտանիկական լաբորատորիայում։

Թագանխանյուսի և մոսկովի, որոնց տնտեսությունը բացառական է կերային արժանիքների տեսակետից, մեր վիկի մեջ ավելի պակաս են պարունակվում, քան «Լյովսկայա»-ն:

Մեր փորձերի ավարտներն առում են, որ տեղական թավոտ վիկը որպես կերարուսյա ունի մի շարք արժանիքներ: Նրա վեգետացիան կարճ է, տալիս է սպիտակուցներով հարուստ և մեծ քանակով կանուխ մասսա, պրոտադիմացկուն է: Այս առավելությունները նրան կարող են դարձնել դաշտային և նախալեռնային շրջաններում բամբակի և ձխախոտի լավ նախորդ:

Հետագա ուսումնասիրությունները հնարավորություն կտան օգտագործել այս վիկը նաև սելեկցիոն նպատակների համար: Անհրաժեշտ է կազմակերպել թավոտ վիկի սերմերի հավաքումը, որը կընդլայնի նրա փորձարկումն ավելի մեծ ծավալով:

Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության նախարարության
Բույսերի Գենետիկայի և Մեկնեցիայի Ինստիտուտ

ԿՐԱԿԱՆԱԹՈՒՆ

1. Труды Экспедиции по инвентаризации естественных кормовых угодий Арм. ССР. Т. I, вып. I, Ереван, 1939
2. М. Г. Туманян — Многоукосные формы сорно-полевых мохнатых вики. Ереван, 1932.
3. Б. Н. Синская — Новые перспективы селекции кормовых растений. Тр. по прикл. бот. ген. и сел. Серия А. № 18, 1936.

С. Т. Авдалбекян

Дополнительные данные о мохнатой вики

Р е з ю м е

Объектом исследования являлась местная дикорастущая мохнатая вика (*Vicia Villosa* Roth). Посев семян вики, собранных в трех районах Армянской ССР, был произведен в полевых условиях, на территории экспериментальной базы Института Генетики и Селекции растений Академии Наук Армянской ССР. Всходы были дружные и сплошные. Фенологические наблюдения показывают, что вегетационный период мохнатой вики сравнительно короткий: от начала появления всходов до цветения—35 дней, между тем как у украинского селекционного сорта «Львовская» тот же период продолжается 60 дней.

Для выявления кормовых достоинств мохнатой вики произведен хи-

мический анализ зеленой массы в начале цветения. Анализами установлен высокий процент белков (23,9%) и общего азота (4,2%).

Раннеспелость, холодостойкость, неприхотливость к внешним условиям, высокое содержание белков в зеленой массе создают все предпосылки для использования местной мохнатой вики для селекции.

Организация сбора семян этой вики будет содействовать расширению опытов.